



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 23 » հունվարի 2020թ.

№ 51 -Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ԹԻՎ 454-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2018 թվականի հուլիսի 23-ի «Հարկային և մաքսային ծառայությունների մրցութային և
ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 454-Լ
հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանով հաստատված հավելվածի «Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության,
ընթացակարգերի և սպասարկման վարչության պետ» բառերը փոխարինել «Հայաստանի
Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի վարչարարության
մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ» բառերով:

2) հրամանով հաստատված հավելվածի «Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի ստուգումների կազմակերպման և դիտարկման
վարչության պետ» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության պետ» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

